## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

04-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 217 Ա

### ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

- մակերեսը՝ 0.37095 հա, կադաստրային ծածկագիր՝ 10-007-0127- :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 04
ք.Եղեգիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

04-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 218 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 24-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի <<Համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին>> 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանի 10-րդ կետով

***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի «Եղեգիսի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2021 թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 11:30-ին անցկացնել մրցույթ:

2.Հաստատել Եղեգիս համայնքի «Եղեգիսի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի անցկացման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3.Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմին՝ սահմանված կարգով իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 04
ք.Եղեգիս

Հավելված
Եղեգիս համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 4-ի N 218 Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

**Եղեգիս համայնքի «Եղեգիսի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի.**

**1.**Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն.

2)հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները.

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

**1.1.** *Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝*

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3)համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**2.**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը (նյութերը).

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.

3)քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5)անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

*Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:*

***3.*** Մրցույթը կանցկացվի Եղեգիսի համայնքապետարանի շենքում (հասցե՝ Եղեգիս համայնք, բն. Շատին, փողոց 1, շենք 1),
***2021 թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 11:30-ին:***

***4.***Դիմումներն ընդունվում են Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմում (հասցե՝ Եղեգիս համայնք, բն. Շատին, փողոց 1, շենք 1, հեռախոս՝ 077-67-20-34), ժամը 09:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ ***2021 թվականի հոկտեմբերի 26-ին, ժամը 18:00-ին:***

***Եղեգիսի համայնքապետարան***

***Աշխատակազմի քարտուղար՝*** ***ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

04-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 219 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող ստորև ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

- կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102- , մակերեսը՝ 5,77732 հա, որից՝ 4,29849 հա արոտավայր և 1.47883 հա վարելահող:
- կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102- , մակերեսը՝ 15,23745 հա, որից՝ 14,51960 հա արոտավայր և 0,71785 հա վարելահող:
- կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102- , մակերեսը՝ 4,43580հա, որից՝ 3.94731հա արոտավայր, 0.44297հա վարելահող և 0.04552հա խոտհարք:
- կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102- , մակերեսը՝ 14,82744 հա, որից՝ 11.19435 հա արոտավայր, 1.607հա վարելահող, և 2.02609հա խոտհարք:
- կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102- , մակերեսը՝ 1,39814հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:
- կադաստրային ծածկագիր՝ 10-029-0135- , մակերեսը՝ 0.42642 հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 04
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am


# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

05-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 220 Ա

## 14-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 203Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով

***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի ղեկավարի 14-ը սեպտեմբերի 2021 թվականի <<Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի բնակիչ Գագիկ Վարազդատի Հայրապետյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 203Ա որոշման՝

1.վերնագրում <<Հայրապետյանի>> բառից հետո լրացնել <<և նրա ընտանիքի անդամների>> բառերով,

2.բովանդակության մեջ <<Գագիկ Վարազդատի Հայրապետյանի, ծնված՝ 28/03/1958թ./>> բառերից հետո լրացնել <<և նրա ընտանիքի անդամներ՝ Արեգնազան Արարատի Ղարիբյանի /կինը, ծնված՝ 17/08/1959թ./, Սամվել Գագիկի Հայրապետյանի /որդին, ծնված՝ 06/02/1987թ./, Սեդա Գագիկի Հայրապետյանի /աղջիկը, ծնված՝ 06/10/1988թ./ և Օֆելյա Գագիկի Հայրապետյանի /աղջիկը, ծնված՝ 19/03/1991թ./>> բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 05
հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

05-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 221 Ա

ԳԱՅԱՆԵ ԱՐԱՐԱՏԻ ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Սալլի բնակավայրի բնակչուհի Գայանե Արարատի Թարվերդյանի սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը /կադաստրային ծածկագիր՝ 10-038-013-003, մակերեսը՝ 0.1515 հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Սալլի բնակավայր, փողոց 3, տուն 13 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　　　　　　　　　　ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 05
հ.Եղեգիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

06-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 222 Ա

### 15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 39Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով

***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի ղեկավարի 15-ը փետրվարի 2019 թվականի <<Փոստային հասցե տալու մասին>> թիվ 39Ա որոշման բովանդակության մեջ՝ <<Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի փողոց 2, փկղ 4/1, տուն 1 հասցեում >> բառերը և թվերը փոխարինել <<Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի փողոց 2, փակ 5, տուն 1 հասցեում>> բառերով և թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 06
հ.Եղեգիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

## ***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

07-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 223 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ՝ ԵՐԵՔ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով

***որոշում եմ՝***

Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-010-0120-0042, մակերեսը՝ 98.5287հա/ բաժանել երեք ստորև ներկայացված տվյալներով միավորների և կատարել պետական գրանցում՝

- կադաստրային ծածկագիր՝ 10-010-0120- , մակերեսը՝ 0.03հա,
- կադաստրային ծածկագիր՝ 10-010-0120- , մակերեսը՝ 0.03հա,
- կադաստրային ծածկագիր՝ 10-010-0120- , մակերեսը՝ 98.4687հա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 07
ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ Ու Մ***

07-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 224 Ա

## ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով <<ԱՐ ԱՐ ՖԱՐՄ>> ՍՊԸ-ի հայտը

***որոշում եմ՝***

1.<<ՎԵՌԼԻԱ ՋՈՒՐ>> ՓԲԸ-ին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 07
ք.Եղեգիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

### *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

08-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 225 Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/01/2020թ. թիվ 02-Ն որոշումը

***որոշում եմ՝***

Ա/Ձ Մարետա Սմբատյանին տալ Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի վարչական տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ չորրորդ եռամսյակի կտրվածքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 08
հ.Եղեգիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

08-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 226 Ա

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 22/12/2020թ. թիվ 89-Ն որոշումը

***որոշում եմ՝***

Ա/Ձ Համազասպ Ղազարյանին տալ Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի վարչական տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ չորրորդ եռամսյակի կտրվածքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 08
հ.Եղեգիս